



Գրանցված
22.02.2010
11010083

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1098 - Ն

07. 12 2009

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0312 « ԴԱՍԱՎԱՆՂՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՓՈՐՈՇԻՉԸ ՖԱՏՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկլարովելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ԳԳ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ԳԳ ԿԿ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ձ հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովների փորձագիտական եզրակացությունը.

ԳՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ա. Աղբալյան) և օրենսդրության և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ. Գրիգորյան) սահմանված կարգով հրամանը ներկայացնել ԳԳ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:



ՆԱԽԱՐԱՐ

ԱԱՇՈՏՅԱՆ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0312 «ԴԱՍԱՎԱՆՂՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0312 «ԴԱՍԱՎԱՆՂՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 0312 «Դասավանդում տարրական դասարաններում մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73 -Ն որոշմամբ:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության համար մասնագիտացումներ չեն սահմանվել:

3. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Տարրական դասարանների ուսուցիչ» որակավորում:

4. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

- 1) առկա,
- 2) հեռակա,
- 3) դրսեկության (էքստեռնատ),
- 4) հեռավար (դիստանցիոն):

5. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով

- | | | |
|--|---|------|
| ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով | 3 | տարի |
| բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով | 4 | տարի |

2) կրթության հեռակա ձևով

- | | | |
|--------------------------------------|---|------|
| ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով | 4 | տարի |
|--------------------------------------|---|------|

3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի

հեռավար (դիստանցիոն) և դրսեկությանը (էքստենսիոն) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 4032 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6858 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0312 «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքը՝

1) ուսուցանել տարրական կրթության մեկ կամ մի քանի առարկաներ և կազմակերպել որոշակի կրթական գործունեություն

8. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

- 1) մշակել և լրամշակել ուսուցման ծրագրեր,
- 2) անցկացնել ուսուցում հանձնարարված կամ երաշխավորված ծրագրի սահմաններում,
- 3) կազմակերպումել երեխաների գիտելիքների ստուգում և ինքնաստուգում,
- 4) ուսումնական ծրագրից դուրս կազմակերպել և հսկել սովորողների գործունեությունը,
- 5) կազմակերպել և անցկացնել ուսումնադաստիարակչական գործընթաց,
- 6) խրախուսել սովորողների անձնական հաջողությունները, քննարկել նրանց ձեռքբերումները ծնողների և ուսումնական մասի վարիչի հետ, ծնողներին մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական գործընթացին,
- 7) պատրաստել զեկուցումներ,
- 8) պատասխանատու է երեխայի առողջության պահպանման և կյանքի անվտանգության համար:

ԳԼՈՒԽ 3.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՁՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0312 «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,
- 2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
- 3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,

- 4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,
- 5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
- 6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
- 7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
- 8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
- 9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՅԱՆՋՆԵՐ 0312 «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ

10. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) իմանալ ՀՀ Սահմանադրության, սլյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
- 2) տիրապետել հայոց լեզվին,
- 3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
- 4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- 5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
- 6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
- 7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
- 8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
- 2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների

կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

ԳԼՈՒԽ 5.

ՊԱՅՄԱՆՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0312 «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կան նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների,

ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

- ա. անատոմիա, ֆիզիոլոգիա և առողջապահության,
- բ. գրականության, հայոց լեզվի և ուսուցման մեթոդիկայի,
- գ. մաթեմատիկայի և ուսուցման մեթոդիկայի,
- դ. մանկավարժության և հոգեբանության,
- ե. կերպարվեստի և դասավանդման մեթոդիկայի,
- զ. երաժշտության և դասավանդման մեթոդիկայի,
- է. տեխնոլոգիայի և ուսուցման մեթոդիկայի,
- ը. ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի,
- թ. օտար լեզուների:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. ՏՀՏ,
- բ. անհատական համակարգիչների:

3) Ուսումնական արհեստանոցներ

- ա. տեխնոլոգիայի:

4) Սպորտային համալիր՝

- ա. մարզադահլիճ,
- բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում:

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ

միջնորդության) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0312 «ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

- 1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,
- 2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,
- 3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,
- 4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՉԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՉԴԴ 4 - 09 - 001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է յուրացնել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է ընդհանուր կրթության և անձի զարգացման տարրեր: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի հաղորդակցության համար էական նշանակություն ունեցող ունակություններ, ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով դրսևորվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1 Կատարման չափանիշներ	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:
Ուսումնառության արդյունք 2 Կատարման չափանիշներ	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը, բ. կատարված հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ, գ. տեղեկատվության առանձնացում/ խմբավորումը նպատակային է կատարում, դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:
Ուսումնառության արդյունք 3 Կատարման չափանիշներ	Նախաձեռնել, պահպանել, եզրփակել երկխոսություններ և քննարկումներ ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները՝ պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը, բ. ազատ ձևով ձևակերպում, արտահայտում, պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, գ. ցուցաբերում է համոզելու հստակություն, դ. կատարում է ճիշտ ամփոփում (եզրափակում):
Ուսումնառության արդյունք 4 Կատարման չափանիշներ	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ և նկարներ ա. ճիշտ է նախանշում սխեմաների աղյուսակների, դիագրամաների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները, բ. մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:
Ուսումնառության արդյունք 5 Կատարման չափանիշներ	Կատարել փաստաթղթավորում ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը ըստ նրանց նշանակության՝ (դիմում,

	<p>ինքնակենսագրություն(տրված տարբեր տեսակի ֆորմատներով), պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ, արձանագրություն, երաշխավորագիր)</p> <p>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը,</p> <p>գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԿՏԱՆՊՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՈԱԶԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱԱՕ 4- 09 – 001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել արտադրական կազմակերպություններում աշխատանքային անվտանգության պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում, հիմնարկներում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:</p>
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները,</p> <p>գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին բուժօգնություն
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը,</p> <p>բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը,</p>

	<p>գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ,</p> <p>դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները,</p> <p>ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը,</p> <p>զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԸԱԳՀ 4 -09-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները,</p> <p>գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),</p> <p>դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:</p>
Ուսումնառության արդյունք 2	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ,</p> <p>գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ,</p> <p>դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:</p>
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին,</p> <p>ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ,</p> <p>զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:</p>
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:</p>

Ուսումնառության արդյունք 5	Դրսևորել քննադատական մտածողություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը, բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ, գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:
Ուսումնառության արդյունք 6	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները, բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան), գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները, դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում, ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը, զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները, է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՕՀ 4 - 09 - 001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը, բ. բացել նոր փաստաթուղթ, գ. ստեղծաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ (առանց ֆորմատավորման), մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ), թվանշաններ, դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ, ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում, զ. փակել փաստաթուղթը, է. բացել առկա փաստաթուղթը, ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի տարրական ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, բ. նշել բառերը և տեքստային հատվածները, գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում, դ. կատարել տողերի հավասարեցում, ե. փոխել միջտողային տարածությունները,

	<p>գ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով, է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով, ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից, թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները, ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները, ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը, ժբ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ (փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ, ժգ. պատճենել տեքստը, ժդ. տեղափոխել տեքստը, ժե. տողադարձել տեքստը, ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:</p>
Ուսումնառության արդյունք 3	Փաստաթղթի պահպանում
Կատարման չափանիշներ	<p>ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը, բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:</p>
Ուսումնառության արդյունք 4	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	<p>ա. պատրաստել աղյուսակ, բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները, ժ. փոխել սյունակի լայնությունը Սկնիկի օգնությամբ, զ. փոխել տողի բարձրությունը Սկնիկի օգնությամբ, է. փոխել աղյուսակի գծերի գույնը, ը. գունավորել աղյուսակի տողը և սյունը:</p>
Ուսումնառության արդյունք 5	Գրաֆիկական խմբագրում և նկարագարում
Կատարման չափանիշներ	<p>ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրել կանոնավոր պատկերներ, դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ, պատճենել, պտտել, շրջել, փոխել չափերը, ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները, զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, է. գծագրել տեքստային բլոկներ, ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները, թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները, ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:</p>
Ուսումնառության արդյունք 6	Փաստաթղթի տպագրում
Կատարման չափանիշներ	ա. Նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,

	բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները, գ. տպագրել փաստաթուղթը:
Ուսումնառության արդյունք 7	Ինտերնետում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը, բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը, գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը, դ. իմանալ History հրամանի նշանակությունը, ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը, զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը, է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը, ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը, թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից, ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից, ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները, ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա, ժգ. ճիշտ օգտվելով ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից, ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակությունը, ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակը հայոց լեզվի, որպես մայրենի լեզու ուսուցման հիմք լինելու գործառնական գաղափարի յուրացումն է, ինչպես նաև ուսանողներին հայոց լեզվի հնչյունաբանության և բառագիտության, հայերենի ձևաբանության, խոսքի մասերի քերականական կարգերի մասին գիտելիքները գրավոր ու բանավոր խոսքում անսխալ կիրառելու հմտություններ տալը;
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն;
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ հայոց լեզվի դերը ու նշանակությունը որպես ազգային և պետական լեզու
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի դերը որպես ազգային և պետական լեզու, բ. ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի՝ որպես ազգային և պետական լեզվի կիրառությունը Հայաստանի Հանրապետությունում, գ. ճիշտ է մեկնաբանում հայոց լեզվի՝ որպես ազգային և պետական լեզվի ընկալման և կիրառման կրթական խնդիրները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ հայոց լեզվի դերը որպես հաղորդակցության միջոց

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի դերը որպես հաղորդակցության միջոց, բ. ճիշտ է ներկայացնում լեզվի հաղորդակցական գործառնություններն ու դրանց կիրառման ոլորտները, գ. ճիշտ է ներկայացնում լեզվի դերը սոցիալական շփման, հաղորդակցության տարբեր մակարդակներում:
ՈՒՏՈՒՆՈՒՄԱԿՈՒՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3	Իմանալ հայերենի հնչյունաբանության, հայերենի հնչյունների, դրանց ճիշտ արտաբերման ու համապատասխան տառերի գրության առանձնահատկություններն ու կիրառությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հայերենի հնչյունները, դրանց տեսակները, բ. ճիշտ է մեկնաբանում հնչյուն և տառ փոխհարաբերությունները, հայերենի այբուբենը, գ. ճիշտ է ներկայացնում հայերենի հնչյունների արտասանությունն ու տառերի գրությունը, դ. ճիշտ է ներկայացնում ձայնավորների վանկարար նշանակությունը:
ՈՒՏՈՒՆՈՒՄԱԿՈՒՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4	Իմանալ հայոց լեզվի ձևաբանության առանձնահատկությունները, հայերենի խոսքի մասերի դերը, քերականական կարգերը, կազմությունը, ուղղագրությունը և դրանց ոճական կիրառությունը գրավոր ու բանավոր խոսքում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հայերենի ձևաբանությունը, հայերենի խոսքի մասերն իրենց ընդհանուր և առանձնահատուկ գծերով, բ. ճիշտ է ներկայացնում ձևաբանության ուսումնասիրությանը հատուկ քերականական երևույթները (թիվ, դեմք, ժամանակ, եղանակ, դրանցից բխող հոլովում, խոնարհում և այլն) և դրանց գործնական կիրառությունը:
ՈՒՏՈՒՆՈՒՄԱԿՈՒՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 5	Իմանալ հայերենի բառագիտության և բառակազմության էական հատկանիշները և կարողանալ ճիշտ գործածել դրանք սեփական խոսքի մեջ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հայերենի բառագիտությունն իր բնորոշ գիերով, բ. ճիշտ է ներկայացնում բառի իմաստային շերտերը և գիտի դրանց գործածության հնարավորությունները, գ. ճիշտ է ներկայացնում բառի տեսակներն ըստ իմաստի և ձևի /նույնանիշ և համանիշ, հոմանիշ և հականիշ, համանուն/ և գիտի դրանց ճիշտ գործածությունը, դ. ճիշտ է ներկայացնում բառերի կազմության հիմնական տարրերը, ե. ճիշտ է ներկայացնում բառերի տեսակներն ըստ կազմության, գիտի դրանց գրավոր և բանավոր կիրառությունը, զ. ճիշտ է ներկայացնում բառապաշարի հարստացման հիմնական միջոցները:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԱՐԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-002
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակը հիմնականում գործնական ուսուցման ճանապարհով ուսանողներին հայերենի շարահյուսական առանձնահատկությունները սեփական գրավոր և բանավոր խոսքում ճիշտ գործածելու հմտություններ տալն է: Խոսքն առավել տպավորիչ դարձնելու համար ոճաբանության տարբեր տեսակների իմացությունն ու գրավոր և բանավոր խոսաբանում դրանցից ճիշտ օգտվելու կարողությունների ձևավորումը:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒՏՈՒՆՈՒՄԱԿՈՒՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1	Իմանալ հայոց լեզվում նախադասության, նրա կազմության, տեսակների առանձնահատկությունները և գործածական հնարավորությունները առօրյա խոսքում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում նախադասության տեսակների գործածության բազմազանությունը, բ. ճիշտ է ներկայացնում նախադասության կազմությունը և առանձին կառույցների կիրառման նպատակահարմարությունը՝ կապված կենդանի խոսքի առանձնահատկություններից, գ. ճիշտ է ներկայացնում նախադասության կառուցվածքը, նրա ոճական և կիրառական յուրահատկությունները

	սեփական խոսքում, դ. կարողանում է ճիշտ, հայերեն նախադասության կառուցի մեջ դնել թարգմանաբար ներկայացված գրավոր խոսքը:
ՈՒՏՈՒՆՆԱԶՈՒՅՅԱՆ արդյունք 2	Իմանալ դարձվածքի, որպես լեզվական միավորի, կազմությունը և նրա գործածական հնարավորությունները կենդանի խոսքում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում դարձվածքը որպես լեզվական միավոր, կարողանում է ինքնուրույն կազմել և ներկայացնել կոնկրետ դարձվածքների համատեքստին մոտ այլ օրինակներ սեփական կենսափորձից, բ. ճիշտ է ներկայացնում դարձվածքների, թևավոր արտահայտությունների և առածների ծագման ուղիները և կարողանում է ինքնուրույն օրինակներ դուրս բերել իրեն շրջապատող իրականությունից:
ՈՒՏՈՒՆՆԱԶՈՒՅՅԱՆ արդյունք 3	Իմանա բառարանների (մասնավորապես հայերենի) տեսակները և կարողանա օգտվել դրանցից
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պարզագույն բառարանների կառուցվածքն ու դրանցից օգտվելու ձևերը, բ. ճիշտ է կարողանում ընտրել անհրաժեշտ տեսակի բառարանը և օգտվել դրանից, գ. ճիշտ է մեկնաբանում բազմազան բառարանների կիրառական նշանակությունը, դ. կարողանում է օգտվել էլեկտրոնային տարբեր բառարաններից:
ՈՒՏՈՒՆՆԱԶՈՒՅՅԱՆ արդյունք 4	Իմանալ հայերենի ոճաբանության խնդիրները և կարողանա վարժ կերպով օգտվել ոճական տարատեսակներից բանավոր և գրավոր խոսք կազմելիս
Կատարման չափանիշներ	ա. գիտի և ճիշտ է ներկայացնում հայերենի գործառական, խոսակցական, գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական, վարչական ոճերը և նրանց առանձնահատկությունները, բ. կրողանում է հայերեն ճիշտ ոճի մեջ դնել թարգմանաբար ներկայացված խոսքը:
ՈՒՏՈՒՆՆԱԶՈՒՅՅԱՆ արդյունք 5	Իմանալ և սեփական խոսքի մեջ կիրառել հայոց լեզվի արտահայտչական և պատկերավորության միջոցները
Կատարման չափանիշներ	ա. գիտի հայերենի կետադրությունը /տրոհության, բացահայտության, առոգանության նշանները/ և նրանց ճիշտ գործածությունը գրավոր և բանավոր խոսքում, բ. ճիշտ է ներկայացնում հայոց լեզվի արտահայտչական և պատկերավորության միջոցները /համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն, այլաբանություն, մակդիր և այլն/ սեփական գրավոր և բանավոր ստեղծագործություններում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-003
Մոդուլի նպատակը	Մոդուլը նշակվել է ուսանողների խոսքի զարգացման, նրանց ստեղծագործական ունակությունների բացահայտման և զարգացման, ուսանողների կողմից այդ ունակությունները զարգացնող մեթոդների և հնարքների յուրացման, ուսանողների լեզվազգացողության և լեզվամտածողության կատարելագործման, հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակներով: Մոդուլը նախատեսված է նախադպրոցական հաստատությունների դաստիարակների և կրտսեր դպրոցների դասվարների, 3-10 տարեկան երեխաների հետ աշխատող այլ մասնագետների համար:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի „Մանկական գրականություն և բանահյուսություն,, մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒՏՈՒՆՆԱԶՈՒՅՅԱՆ արդյունք 1	Ուսանողը պետք է կարողանա պարզ, հակիրճ, գրագետ և ստեղծագործաբար կառուցել իր խոսքը
Կատարման չափանիշներ	ա. խոսքը լսարանին, խնդրին /թեմային/, առարկային իրավիճակին համապատասխան է կառուցում, բ. խոսքը հակիրճ՝ առանց ավելորդաբանությունների է կառուցում,

	<p>գ. տիրապետում է մանկանն ուղղված գրավոր և բանավոր խոսքի լեզվի առանձնահատկություններին,</p> <p>դ. նկարագրում է մարդկանց (ընկերներին, դասավանդողներին, ստեղծագործությունների հերոսների, կենդանիներ), երևույթներ (բնական, զգացմունքային, ֆիզիոլոգիական), դեպքեր,</p> <p>ե. պատմություններ, հեքիաթներ է հորինում և տարբեր միջոցներով ներկայացնում դրանք,</p> <p>զ. որևէ իրական դեպքի մասին մանրամասն և հակիրճ է պատմում,</p> <p>է. դասախոսի առաջարկած կամ իր ընտրած թեմային վերաբերող հետազոտական աշխատանք է կատարում:</p>
Ուսումնառության արդյունք 2	Ուսանողը կարողանում է համակարգչի կիրառմամբ խմբագրել իր և ընկերների խոսքը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է պահպանում է տեքստի իմաստային, կառուցվածքային և ոճական ամբողջ կանոնությունը</p> <p>բ. գիտի և տարբերում է լեզվական ճիշտ և սխալ կառույցները առավել տարածված լեզվական սխալների ճիշտ տարբերակները</p> <p>գ. տեղին է գործածում մայրենի լեզվի բառապաշարի տարբեր շերտերը</p> <p>դ. կարողանում է տեքստից հանել և տեքստը ծանրացնող, տեքստին ոչինչ չտվող լեզվական ավելորդ միավորները կամ դրանք փոխարինում համարժեք միավորներով:</p>
Ուսումնառության արդյունք 3	Կարողանալ գրավոր և բանավոր ցանկացած տեքստ փոխադրել՝ անհրաժեշտության դեպքում ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով կամ զուգահեռ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով
Կատարման չափանիշներ	<p>ա. վերապատմում, փոխադրում է տեքստը՝ որոշակի առաջադրանքով</p> <p>բ. տրված տեքստը բանավոր ներկայացնում է լսարանին՝ առանց մեկնաբանությունների, սեփական մեկնաբանություններով,</p> <p>գ. տրված տեքստը փոխադրում է իր անունից, հեղինակի անունից, հերոսներից մեկի կամ նրա անունից, ում վերաբերում է տեքստը,</p> <p>դ. տեքստի բովանդակությունից ելնելով՝ տեքստը վերապատմում է (դրականորեն տրամադրված անձի կամ տեքստի հերոսի անունից, բացասականորեն տրամադրված անձի կամ տեքստի հերոսի անունից, չեզոք անձի կամ տեքստի հերոսի անունից,</p> <p>ե. ասախոսի առաջարկած տարբեր տեքստեր վերաշարադրում է մանկան տարիքին, ընկալումներին, մտածողությանը համապատասխան լեզվով,</p> <p>զ. տարբեր ուսուցողական նպատակներով ընդարձակում կամ համառոտում է ցանկացած տեքստ:</p>
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ տարբեր նպատակներով և ուղղվածության տեքստեր կազմել
Կատարման չափանիշներ	<p>ա. պաշտոնական և այլ նամակներ, գրություններ, հաշվետվություններ է գրում,</p> <p>բ. տարբեր բնագավառներին վերաբերող տեղեկատվական նյութեր է պատրաստում,</p> <p>գ. թեմային, ժանրին համապատասխան ճիշտ է գործածում մասնագիտական տերմինները, ձևակերպումները,</p> <p>դ. ուսանողը տրամաբանորեն ներկայացնում է իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ միտքը հստակ, հասկանալի ձևակերպել, պարզ, հակիրճ, գրագետ, ստեղծագործաբար կառուցել իր խոսքը
Կատարման չափանիշներ	<p>ա. Ցանկացած նյութ ներկայացնելիս կարողանում է խոսքը կառուցել իր ասելիքի տրամաբանությունը հաշվի առնելով,</p> <p>բ. կարողանում է իր դատողությունները ներկայացնել փաստարկներով և պատճառաբանություններով՝ խուսափելով ավելորդաբանություններից,</p> <p>գ. տրամաբանորեն ներկայացնել իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները, անհրաժեշտության դեպքում նաև առաջարկություններ անել:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	Դ ՏԴ 04-09-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է կրտսեր դպրոցի ապագա ուսուցիչներին մաթեմատիկական գիտելիքներ և հմտություններ տալը,

	որոնք անհրաժեշտ արդյունավետ ուսուցում կազմակերպվու համար: Այստեղ ուսանողները կյուրացնեն թվաբանության, մեծությունների, երկրաչափության և հանրահաշվի տարրերի մասին գաղափարները՝ մաթեմատիկայի առարկայական չափորոշիչների հիման վրա:
Մոդուլի տևողությունը	144 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ռեսուլտատային արդյունք 1	Իմանալ բվնական թվերի բազմությունը, զրոն: Թվարկության դիրքային և ոչ էլ դիրքային համակարգերը: Համեմատի բնական թվերը
Կատարման չափանիշներ	ա. գիտի բնական թվերը օգտագործել առարկաների քանակը հաշվելիս, համարակալելիս և արդյունքները գրանցելիս, բ. գիտի համեմատել բնական թվերը, գ. ճիշտ է մեկնաբանում թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգերը, դ. կարող է բացատրել թվային կարգերը, թվային դասերը, ե. կարող է բնական թիվը կլորացնել մինչև թվային կարգը:
Ռեսուլտատային արդյունք 2	Իմանալ թվաբանական գործողությունների հատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում թվաբանական գործողություններ բնական թվերի հետ, բ. ճիշտ է կիրառում թվաբանական գործողությունների հատկությունները, գ. ճիշտ է թիվը ներկայացնում, կարգային գումարելիների գումարի տեսքով, դ. գիտի թվաբանական գործողությունների կատարման հերթականությունը, ե. գիտի մնացորդով բաժանում կատարել, զ. գիտի զույգ և կենտ թվերի բազմությունը, է. գիտի բաժանելիության հայտանիշները:
Ռեսուլտատային արդյունք 3	Իմանալ առարկաների համեմատում, դասակարգումը և խմբավորումն ըստ որոշակի հատկանիշների: Գաղափար ունենա փոխկապակցվածության մասին
Կատարման չափանիշներ	ա. Կարող է ճիշտ համեմատել և դասակարգել առարկաները ըստ մեծության կամ այլ հատկանիշների, բ. գաղափար ունի ապրանքի գին-քանակություն-արժեք, արագություն-ժամանակ-ճանապարհ փոխկապակցվածությունների մասին, գ. գիտի կատարել առարկաների փոխդասավորվածություն վերև-ներքև, առաջ-հետ, աջ-ձախ, բարձր-ցածր:
Ռեսուլտատային արդյունք 4	Ճանաչի երկրաչափական մարմինները և պատկերները, իմանա չափման միավորները և դրանց կիրառությունը
Կատարման չափանիշներ	ա. գիտի չափման միավորները, չափման միավորների ընտրությունը, չափման գործիքները, բ. գիտի նույն մեծության չափման տարրերի միավորների միջև եղած կապերը, գ. գիտի երկրաչափական պատկերները՝ եռանկյուն, քառանկյուն, շրջան ... դ. կարող է հաշվել պարագիծ, մակերես, ե. հարթ պատկերները բաժանել, տրոհել մասերի և ստանալ նոր պատկերներ, զ. գիտի պարզ դեպքերում կառուցել տրված պատկերի համաչափ պատկերը ուղղի կամ կետի նկատմամբ:
Ռեսուլտատային արդյունք 5	Իմանալ կոորդինատային ճառագայթի վրա բնական թվի պատկերման ձևը: Կարողանալ բնական թվերը համեմատել կոորդինատային ճառագայթի միջոցով
Կատարման չափանիշներ	ա. գիտի կոորդինատային ճառագայթի վրա պատկերել տրված բնական թիվը, բ. գիտի, թե ի՞նչ բան է կետի կոորդինատը, գ. գիտի բնական թվերը համեմատել կոորդինատային ճառագայթի միջոցով:

ՈՒՏՈՒՆԱԶՈՒՅՄԱՆ արդյունք 6	Իմանալ հանրահաշվի տարրերը
Կատարման չափանիշներ	ա. գիտի թվաբանական գործողությունների հատկությունների բառային և նշանային ձևակերպումը, բ. գիտի մեկ գործողություն պարունակող հայերեն նախադասությունը գրել թվային արտահայտության տեսքով և հակառակը, գ. գիտի արդյունքի և բաղադրիչների միջև եղած կապը, դ. գիտի լուծել խնդիրներ: Կարողանում խնդրի լուծման համար օգտագործել գծապատկերներ, աղյուսակներ, սխեմաներ, տարբերանշաններ և այլն:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ-04-09-009
Մոդուլի նպատակը	Մոդուլը մշակվել է համաշխարհային գրականության դասական ստեղծագործությունների միջոցով զարգացնել ուսանողների աշխարհընկալումը, ուսանողներին հնարավորություն տալ հաղորդակցվել համամարդկային արժեքների հետ, ընդլայնել նրանց աշխարհայացքը, զարգացնել նրանց գեղագիտական ճաշակը, վերլուշական մտածողությունը: Մոդուլը նախատեսված է նախադպրոցական հաստատությունների դաստիարակների և կրտսեր դպրոցների դասավարների համար:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողնողը պետք է յուրացրած լինի „Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն“, մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒՏՈՒՆԱԶՈՒՅՄԱՆ արդյունք 1	Ճանաչել համաշխարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները
Կատարման չափանիշներ	ա. Ձևավորված գրական ճաշակ ունի և ստեղծագործությունների ընտրությունը կատարում է հիմնական դասական գրականությունից, բ. դրանք ներկայացնում է լսարանին՝ հաշվի առնելով լսարանի հետաքրքրությունները, հոգևոր պահանջներ, հետքերություն առաջացնում ստեղծագործության նկատմամբ, գ. կարողանում է ընթերցել կամ արտասանել ընկերների համար:
ՈՒՏՈՒՆԱԶՈՒՅՄԱՆ արդյունք 2	Իմանալ գրական ժանրերը, դրանց առանձնահատկությունները, ծանոթ լինի դրանց դասական նմուշներին
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է էկոլոգիական գիտելիքների ուսուցանման միջոցով ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ, դրա հիման վրա ձևավորել էկոլոգիական վարքագիծ, ինչը ուսանողը կօգտագործի իր հետագա մասնագիտական գործունեության մեջ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ էկոլոգիական հիմնական հասկացությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիան որպես բնագիտական, սոցիալական գիտություն և նրա կապը այլ գիտությունների հետ, բ. ճիշտ է բացատրում անկենդան, կենդան և մարդածին գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա, գ. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր էկոլոգիական հիմնախնդրի էությունը, գ. գիտի ՀՀ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, ՀՀ «Կարմիր գիրքը» և նրանց ընդհանուր բովանդակությունը, դ. գիտի անձի էկոլոգիական իրավունքներն ու պարտականությունները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը, բ. գիտի էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ, գ. ճիշտ է բացատրում էկոլոգիական դաստիարակության դերը մարդու ամենօրյա գործունեության մեջ:
Ուսումնառության արդյունք 4	Դրսևորել էկոլոգիական վարքագիծ իր ամենօրյա գործունեության մեջ
Կատարման չափանիշներ	1. Կարողանում է ճիշտ կողմնորոշվել և համապատասխան լուծումներ տալ էկոլոգիական իրավիճակային խնդիրներին:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ-04-09-017
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է բնագիտության վերաբերյալ գիտելիքների ուսուցանման միջոցով ուսանողին օժտել բնագիտական գիտելիքներով և առանձին կարողություններով, որոնք կնպաստեն ճանաչելու շրջապատող բնությունը, դիտարկել բնության տարբեր երևույթները և մեկնաբանել դրանք:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ընդհանուր տեղեկություններ տիեզերքի, Արեգակնային համակարգի, Երկրագնդի մասին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տիեզերքի կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում Արեգակնային համակարգի կառուցվածքը, ճիշտ է թվարկում Արեգակնային համակարգի մոլորակների անվանումները,

	գ. ճիշտ է ներկայացնում Երկրագնդի կառուցվածքը, նրա կլիման և եղանակները:
ՈՒՏՈՒՆՆԱԹՈՒՅՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 2	Իմանալ տեղեկություններ մթնոլորտի, ջրոլորտի և քարոլորտի վերաբերյալ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում Երկրագնդի մթնոլորտի կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում Երկրագնդի ջրոլորտի կառուցվածքը, գ. ճիշտ է ներկայացնում Երկրագնդի քարոլորտի կառուցվածքը, դ. ճիշտ է ցույց տալիս ցամաքի և ջրային միջավայրի բաշխվածությունն ըստ մայրցամաքների և օվկիանոսների գլոբուսի և քարտեզի վրա, ե. ճիշտ է ցույց տալիս Հայաստանի հիմնական լեռները, գետերը, լճերը, մարզերը քարտեզի վրա:
ՈՒՏՈՒՆՆԱԹՈՒՅՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3	Ճանաչել և մեկնաբանել բնական երևույթները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում քամու առաջացման պատճառները և ճանաչում է քամիների տարատեսակները, բ. ճիշտ է բացատրում մթնոլորտային երևույթների և տեղումների առաջացման պատճառները, ճանաչում է մթնոլորտային երևույթների և տեղումների տեսակները, գ. ճիշտ է բացատրում երկրաշարժերի առաջացման պատճառները և ուժգնության սանդղակը, դ. ճիշտ է բացատրում ջրհեղեղների և սելավների առաջացման պատճառները, ե. ճիշտ է բացատրում բնական հրդեհների առաջացման պատճառները:
ՈՒՏՈՒՆՆԱԹՈՒՅՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4	Իմանալ կենդանիներին և բույսերի կառուցվածքային հիմնական առանձնահատկությունները, ճանաչել շրջապատող բնության մեջ հանդիպող կենդանիները և բույսերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տարբեր կենդանիների և բույսերի կառուցվածքային առանձնահատկությունները, բ. ըստ կառուցվածքային առանձնահատկությունների ճիշտ է տարբերում կարգաբանական տարբեր խմբերի պատկանող կենդանիներին և բույսերին, գ. ճանաչում է ընտանի կենդանիներին և տարբերում նրանց վայրի կենդանիներից, դ. ճանաչում է մշակովի բույսերին և տարբերում նրանց վայրի աճող բույսերի, ե. ճանաչում է Հայաստանում առավել տարածված կենդանիներին և բույսերին, զ. ճիշտ է ներկայացնում բնական երևույթների և եղանակի դերն ու նշանակությունը կենդանիների և բույսերի կյանքում:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒՄԸ»	
Մոդուլի դասիչը	04-09-018
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակը ուսանողներին հայոց լեզվի դասավանդման ավանդական և նորագույն մեթոդներ, մեթոդական հնարներ և միջոցներ, ուսուցման եղանակներ սովորեցնելն է: Հայոց լեզվի դերն ու նշանակությունը տարրական դպրոցի ուսուցման համակարգում բացահայտելն ու մայրենի լեզվով ազատ ու անկաշկանդ արտահայտվելու հնարավորությունների բացահայտելը՝ առարկայական չափորոշիչի վրա հիմնված ուսուցում իրականացնելու համար:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ են անհրաժեշտ «Հայոց լեզու», «Հոգեբանություն», «Մանկավարժություն», «ՏՀՏ», «Մանկական գրականություն և ժողովրդական բանահյուսություն» մոդուլներից:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒՏՈՒՆՆԱԹՈՒՅՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1	Իմանա կրտսեր դպրոցի Հայոց լեզու առարկայի պետական չափորոշիչը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում տարրական դպրոցի «Հայոց լեզու» առարկայի պետական չափորոշիչն ու առարկայական ծրագրի նպատակները, բ. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի «Հայոց լեզու» ուսումնական գործունեության տեսակներն ըստ պետական

	<p>չափորոշիչի և ծրագրի, գ. ճիշտ է մեկնաբանում կրտսեր դպրոցի «Հայոց լեզու» կրթական ընդհանուր և հիմնական խնդիրներն ըստ չափորոշիչի և ծրագրի բոլոր բաժինների, դ. գիտի տարրական դպրոցի «Հայոց լեզու» առարկայի պետական չափորոշիչն ու առարկայական ծրագրի բովանդակային միջուկը և կարողանում է օգտվել դրանից, ե. տիրապետում է ծրագրի թեմաների հիմնական բովանդակային բաաժանմանը՝ թիվը և թվի նշանակությունը, զ. ճիշտ է բացատրում կրտսեր դպրոցի աշակերտի համար նախատեսված հիմնական կարողություններն ըստ չափորոշիչի (ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, խտեղծագործական, ինքնուրույն, արժեքային):</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ մայրենի լեզվով հաղորդակցման ձևերն ու դրա զարգացման միջոցներն ու մեթոդները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում մայրենի լեզվով հաղորդակցվելու կարողության զարգացման գանազան միջոցները, բ. ճիշտ է բացատրում լեզվի կիրառման հմտությունների դրսևորումները շփման-հաղորդակցության տարբեր բարդության խնդիրներ լուծելու նպատակով, գ. ճիշտ է մեկնաբանում մայրենի լեզվով հաղորդակցության հոգեբանամանկավարժական հիմքերը, դ. ճիշտ է ներկայացնում լեզվական հաղորդակցության բազմազան ձևերը, ե. գիտի աշակերտների իրական կյանքի տվյալների և իրավիճակների հիման վրա ընտրել ու կազմել բանավոր և գրավոր լեզվով շփվելու-հաղորդակցվելու միջոցներ:</p>
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ լեզվամտածողության զարգացման ձևերն ու մեթոդները:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ և հիմնավորված ներկայացնում է տարբեր խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ լեզվական հմտությունների և մեթոդների ամբողջությունը, բ. ճիշտ է պատկերացնում լեզուն բանավոր կամ գրավոր խասքի մեջ կիրառելու, դրան նախորդող վերլուծություն և մեկնաբանություններ կատարելիս աշակերտներին օգնելու ձևերն ու մեթոդները, գ. ճիշտ է կարողանում կապեր գտնել թե՛ Հայոց լեզվի տարբեր բնագավառների և թե՛ Հայոց լեզվի ու այլ ուսումնական առարկաների միջև, դ. ճիշտ է գործածում լեզվական գաղափարները ընդհանրացումներ ու կապեր ներկայացնելու և նկարագրելու համար, ե. գիտի աշակերտներին օգնելու ձևերն ու միջոցները՝ հստակեցնելու իրենց միտքը, խորացնելու ուսումնասիրվող նյութի ըմբռնումը և դրան համապատասխան սեփական կարծիք արտահայտելը:</p>
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ գրաճանաչության նշանակությունը տարրական դպրոցում նախնական լեզվական գիտելիքների ձևավորման գործում
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները լեզվի ուսուցման այլ փուլերից, բ. գիտի և ճիշտ է ներկայացնում գրուսուցման շրջանների դասավանդման մեթոդներն ու եղանակները:</p>
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ մայրենի լեզվով քննարկումներ, բանավեճեր, ներկայացումներ, ընթերցումներ և գրավոր հաղորդակցություն կազմակերպելու մեթոդներ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է մեկնաբանում մայրենի լեզվով վերլուծելու, փաստարկումներ, եզրահանգումներ կատարելու, միտքը ստուգելու և գնահատելու ձևերն ու մեթոդները, բ. ճիշտ է բացատրում մայրենի լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու քայլերը, գ. ճիշտ է բացատրում սեփական գործունեության կամ այլ իրողությունների ներկայացման խոսքի այս կամ այն ձևի ընտրության միջոցները, հիմնավորելու ուղիները, դ. ճիշտ է ներկայացնում դասարանում ազատ, անկաշկանդ մտքեր արտահայտելուն նպաստող մթնոլորտի ձևավորման անհրաժեշտությունն ու միջոցների բազմազանությունը:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-019
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է տարրական դպրոցի ապագա ուսուցիչներին ծանոթացնել մայրենի լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդաբանությանը, դրանից բխող ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ձևերին, դասի պլանավորման նորագույն մոտեցումներին ու սկզբունքներին, ինչպես նաև Հայոց լեզվից ստուգման/գնահատման նոր, այլընտրանքային ձևերին:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ են հարկավոր Մանկավարժությունից, Հայոց լեզվից, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա 001 մոդուլից, ինչպես նաև Հոգեբանությունից, Մանկավարժությունից, ՏՀՏ-ից, Մանկական գրականությունից և Ժողովրդական բանահյուսությունից:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ մայրենի լեզվի ուսուցման և ուսումնառության մեթոդական արդի միտումներն ու առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում մայրենի լեզվի ուսուցման մանկավարժական-մեթոդական էական առանձնահատկություններն ու տարբերությունները ավանդական և ժամանակակից մոտեցումներում, բ. ճիշտ է բացատրում մայրենի լեզվից ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ուսումնական գործընթաց կազմակերպելու առանձնահատկությունները, գ. ճիշտ է պատկերացնում <i>գիտելիք կարողություն, հմտություն և արժեքային համակարգ</i> հասկացությունների կիրառական առաջնահերթությունները հայոց լեզվի ուսուցման համատեքստում:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ մայրենի լեզվից դասի պլանավորման նոր միտումները ձևերն ու միջոցները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում մայրենի լեզվի ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, բ. ճիշտ է մեկնաբանում մայրենի լեզվի դասի պլանավորման ավանդական և նոր ձևերի էական տարբերությունները, գ. գիտի և ճիշտ է բացատրում ԽԻԿ համակարգով մայրենի լեզվի դասի պլանավորումն ու կիրառումը, դ. գիտի և ճիշտ է բացատրում ըստ Համագործակցային ուսուցման սկզբունքների հայոց լեզվի դասի պլանավորումն ու կիրառումը, ե. գիտի և ճիշտ է բացատրում ըստ ինտեգրված թեմատիկ միավորի կառույցների հայոց լեզվի դասի պլանավորումն ու կիրառումը, զ. գիտի և ճիշտ է բացատրում նախագծային մեթոդի կիրառմամբ հայոց լեզվի դասի պլանավորումն ու կիրառումը:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ Հայոց լեզվից ստուգման/գնահատման նոր, այլընտրանքային ձևերն ու մեթոդները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում ստուգման գնահատման ժամանակակից միտումները հայոց լեզվի ուսուցման համատեքստում, բ. ճիշտ է բացատրում հայոց լեզվի ուսուցման ժամանակ գնահատման այլընտրանքային ձևերի էական տարբերությունները գնահատման ավանդական ձևերից, գ. գիտի և ճիշտ է բացատրում հայոց լեզվի ուսուցման ժամանակ ոչ բալային գնահատման ձևերն ու մեթոդները, դ. գիտի և ճիշտ է բացատրում հայոց լեզվի ուսուցման ժամանակ թեստային ձևերի կիրառումը, ե. գիտի և ճիշտ է բացատրում հայոց լեզվի ուսուցման ժամանակ ուսումնական թղթապանակի կիրառումը, զ. գիտի և ճիշտ է բացատրում հայոց լեզվի ուսուցման ժամանակ գնահատման ռուբրիկների կիրառումը, է. գիտի և ճիշտ է բացատրում հայոց լեզվի ուսուցման ժամանակ թիմային առաջադիմության գնահատման ձևերը և դրանց կիրառությունը:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹՎԱԲԱՆԱԿԱՆ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ, ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՏԱՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 4 - 09 - 020
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է տարրական դասարանների ապագա ուսուցիչներին մաթեմատիկական-մեթոդական գիտելիքներ և հմտություններ տրամադրել, որոնք անհրաժեշտ են կրտսեր դպրոցում Մաթեմատիկայի առարկայական չափորոշի վրա հիմնված ուսուցում իրականացնելու համար: Այս նպատակով ուսանողները կյուրացնեն թվաբանության, չափումների, երկրաչափության, հավանականությունների տեսության, տվյալների վերլուծության և վիճակագրության, հանրահաշվի տարրերի և ֆունկցիաների հիմնարար գաղափարների մատուցման մեթոդներն ու ձևերը, ինչպես նաև կսովորեն օգտագործել համարանք կատարելու համար անհրաժեշտ տարբեր մեթոդներ և գործիքներ:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման հնախնական մասնագիտական գիտելիքներ են անհրաժեշտ Մաթեմատիկայից, Բնագիտությունից, Հայոց լեզվից:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ կրտսեր դպրոցի մաթեմատիկա առարկայի պետական չափորոշիչը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է մեկնաբանում տարրական դպրոցի «Մաթեմատիկա» առարկայի պետական չափորոշիչն ու առարկայական ծրագրի նպատակները, բ. ճիշտ է ներկայացնում կրտսեր դպրոցի «Մաթեմատիկայի» ուսումնական գործունեության տեսակներն ըստ պետական չափորոշիչի և ծրագրի, գ. ճիշտ է մեկնաբանում կրտսեր դպրոցի «Մաթեմատիկայի» կրթական ընդհանուր և հիմնական խնդիրներն ըստ չափորոշիչի և ծրագրի բոլոր բաժինների, դ. գիտի տարրական դպրոցի «Մաթեմատիկա» առարկայի պետական չափորոշիչն ու առարկայական ծրագրի բովանդակային միջուկը և կարողանում է օգտվել դրանից, ե. տիրապետում է ծրագրի թեմաների հիմնական բովանդակային բաաժանմանը՝ թվը և թվի նշանակությունը (համարանք և թվագրություն, չափումներ, երկրաչափություն, հավանականություն և վիճակագրություն, մոդելներ, ֆունկցիաներ, հանրահաշվի տարրեր):
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ կապերը մաթեմատիկայի տարբեր թեմաներում ընդգրկված գաղափարների և գործողությունների միջև ու կարողանում է դրանք մատուցել
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կարողանում օգտագործելով զանազան միջոցներ՝ գրաֆիկական, թվային, հանրահաշվական, բանավոր և ֆիզիկական, բ. ճիշտ է կարողանում կապ հաստատել թե՛ մաթեմատիկայի տարբեր բնագավառների և թե՛ մաթեմատիկայի ու այլ առարկաների, մանավանդ՝ բնական գիտությունների միջև:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ կրտսեր դպրոցում խնդիրների լուծման, վերլուծության, դրանց մատուցման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում մաթեմատիկական գաղափարների ու հմտությունների և դրանց միջև եղած կապերի կիրառությունը տարբեր բարդության խնդիրներ լուծելու նպատակով, բ. գիտի աշակերտների իրական կյանքի տվյալների և իրավիճակների հիման վրա ընտրել ու կազմել մաթեմատիկական ու ոչ մաթեմատիկական խնդիրներ, ապա համապատասխան եղանակներ կիրառել՝ ընդունելի լուծումներ գտնելու համար, գ. ճիշտ և հիմնավորված ներկայացնում է տարբեր տեսակի խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ հմտությունների և մեթոդների ամբողջությունը,

	դ. Ճիշտ է պատկերացնում մաթեմատիկական խնդիրներ լուծելու, դրան նախորդող վերլուծություն և մեկնաբանություններ կատարելիս աշակերտներին օգնելու ձևերն ու մեթոդներ:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ մաթեմատիկական հաղորդակցման ձևերն ու միջոցները
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է գործածում մաթեմատիկական գաղափարները ընդհանրացումներ ու կապեր ներկայացնելու և նկարագրելու համար, բ. Ճիշտ է կարողանում օգտագործել մաթեմատիկայի լեզուն՝ ներառյալ մասնագիտական բառապաշարը և նշանները, գ. Ճիշտ է բացատրում մաթեմատիկորեն քննարկելը, ներկայացնելը, կարդալը, գրելը և լսելը, դ. գիտի աշակերտներին օգնելու ձևերն ու միջոցները՝ հստակեցնելու իրենց մտածողությունը, խորացնելու ուսումնասիրվող առարկայի ըմբռնումը:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ մաթեմատիկական մտածողության զարգացման ձևերն ու մեթոդները
Կատարման չափանիշներ	ա. Գիտի կիրառել ինդուկտիվ և դեդուկտիվ տրամաբանություն՝ մաթեմատիկական եզրահանգումներ կատարելու, ստուգելու և գնահատելու ձևերն ու մեթոդները, բ. Ճիշտ է բացատրում մաթեմատիկական գործողությունների քայլերը հիմնավորելու ձևերը, գ. Ճիշտ է բացատրում տրամաբանական մտածողությունը օգտագործելու՝ փաստարկումներ, վերլուծություններ և եզրակացություններ անելու ապա դրանց ճշտությունը որոշելու միջոցները, դ. Ճիշտ է ներկայացնում համաչափական և տարածական մտածողություն կիրառելու, դիագրամների հիման վրա դատողություններ անելու միջոցներն ու ձևերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 4-09-021
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է տարրական դպրոցի ապագա ուսուցիչներին ծանոթացնել ուսուցման ժամանակակից մեթոդաբանությանը, դրանից բխող ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ձևերին, դասի պլանավորման նորագույն մոտեցումներին ու սկզբունքներին, ինչպես նաև մաթեմատիկայից ստուգման/գնահատման նոր, այլընտրանքային ձևերին:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ են հարկավոր Մանկավարժությունից, Մաթեմատիկայից, Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա 000 մոդուլից, ինչպես նաև Հայոց լեզվից և Բնագիտությունից:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ մաթեմատիկայի ուսուցման և ուսումնառության մեթոդական արդի միտումներն ու առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է մեկնաբանում մանկավարժական-մեթոդական էական առանձնահատկություններն ու տարբերությունները ավանդական և ժամանակակից մոտեցումներում, բ. Ճիշտ է բացատրում ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ուսումնական գործընթաց կազմակերպելու առանձնահատկությունները, գ. Ճիշտ է պատկերացնում գիտելիք կարողություն, հմտություն և արժեքային համակարգ հասկացությունների կիրառական առաջնահերթությունները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ դասի պլանավորման նոր միտումները ձևերն ու միջոցները
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է մեկնաբանում մաթեմատիկայի ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ձևեր, բ. Ճիշտ է մեկնաբանում դասի պլանավորման ավանդական և նոր ձևերի էական տարբերությունները, գ. գիտի և ճիշտ է բացատրում ԽԻԿ համակարգով մաթեմատիկայի դասի պլանավորումն ու կիրառումը,

	<p>դ. գիտի և ճիշտ է բացատրում ըստ Համագործակցային ուսուցման սկզբունքների մաթեմատիկայի դասի պլանավորումն ու կիրառումը,</p> <p>ե. գիտի և ճիշտ է բացատրում ըստ ինտեգրված թեմատիկ միավորի կառույցների մաթեմատիկայի դասի պլանավորումն ու կիրառումը,</p> <p>զ. գիտի և ճիշտ է բացատրում նախագծային մեթոդի կիրառմամբ մաթեմատիկայի դասի պլանավորումն ու կիրառումը:</p>
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ մաթեմատիկայից ստուգման/ գնահատման նոր, այլընտրանքային ձևերն ու մեթոդները:
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է մեկնաբանում ստուգման գնահատման ժամանակակից միտումները մաթեմատիկայի ուսուցման համատեքստում,</p> <p>բ. ճիշտ է բացատրում մաթեմատիկայի ուսուցման ժամանակ գնահատման այլընտրանքային ձևերի էական տարբերությունները գնահատման ավանդական ձևերից,</p> <p>գ. գիտի և ճիշտ է բացատրում մաթեմատիկայի ուսուցման ժամանակ ոչ բալային գնահատման ձևերն ու մեթոդները,</p> <p>դ. գիտի և ճիշտ է բացատրում մաթեմատիկայի ուսուցման ժամանակ թեստային ձևերի կիրառումը,</p> <p>ե. գիտի և ճիշտ է բացատրում մաթեմատիկայի ուսուցման ժամանակ ուսումնական թղթապանակի կիրառումը,</p> <p>զ. գիտի և ճիշտ է բացատրում մաթեմատիկայի ուսուցման ժամանակ գնահատման ռուբրիկների կիրառումը,</p> <p>է. գիտի և ճիշտ է բացատրում մաթեմատիկայի ուսուցման ժամանակ թիմային առաջադիմության գնահատման ձևերը և դրանց կիրառությունը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 4-09-022
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողին տալ ընդհանուր աշխատանքային գիտելիքներ ու կարողություններ՝ աշխատանքային գործիքների, բնական և արհեստական նյութերի, բույսերի, գրաֆիկայի, տեխնիկայի տարերրի, կենցաղի մասին:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի համար անհրաժեշտ է յուրացնել «Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ», «Բնագիտություն», «Մանկավարժություն», «Հոգեբանություն», «Մանկական զրականություն և ժողովրդական բանահյուսություն», «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել տեխնոլոգիայի նպատակը, ներկայացնել կիրառվող նյութերի և աշխատանքային գործիքների առանձնահատկություններն ըստ օգտագործման բնագավառների
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է սահմանում տեխնոլոգիայի նպատակը,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կիրառվող նյութերի առանձնահատկությունները, դասակարգում է նյութերն ըստ տեսքի և ֆիզիկամեխանիկական հատկությունների՝ գույն, փայլ, թափանցիկություն, ճկունություն, ամրություն և արտաքին տեսք,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում նյութերի տեսակներն ըստ օգտագործման բնագավառների,</p> <p>դ. գիտի աշխատանքային գործիքները, պիտույքները և ճիշտ է կիրառում,</p> <p>ե. ճիշտ է կահավորում աշխատատեղը,</p> <p>զ. ճիշտ է պլանավորում աշխատանքի կատարման գործընթացը,</p> <p>է. պահպանում է աշխատանքի անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ պարզագույն պատկերացումներ ծաղիկների և դեկորատիվ բույսերի պահպանման առանձնահատկությունների և աճեցման ձևերի մասին

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բույսերի պահպանման առանձնահատկությունները, դրանց լուսային, ջերմային, օդային և ջրային ռեժիմները, սնուցումը, խնամքը, կանխարգելումն հիվանդություններից և գյուղատնտեսական վնասատուներից, բ. ճիշտ է ներկայացնում բույսերի աճեցման աշխատանքները, հողի և տնկանյութի նախապատրաստումը, ցանքսը (տնկում)՝ սերմով, տնկաշիվերը, թուփը մասնատելով (գիտի ցանելու և տնկելու ժամկետը) և խնամքը:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ պարզագույն պատկերացումներ գիաֆիկայի դերի ու նշանակության մասին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կազմում պարզ գծագրեր և էքիզներ ըստ առաջադրանքի, բ. ճիշտ է պահպանում ձևաչափերը, հիմնական մակագրությունները, ստանդարտները, գծերի տեսակները, գրատեսակները, մասշտաբները, չափանշման և չափադրման կանոնները, գ. ճիշտ է կատարում զուգահեռ և փոխուղղահայաց ուղիղների կառուցումը, հատվածի բաժանումը մասերի, տրված մեծության անկյունների կառուցումը, շրջանագծի բաժանումը հավասար մասերի, ձևաչափերի կողմերի երկարությունների որոշումը:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ աշխատանքային մեքենաների տեսակները, նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, ունենա պարզագույն պատկերացում էլեկտրական հոսանքի մասին
Կատարման չափանիշներ	ա. Գիտի աշխատանքային (տրանսպորտային, տեխնոլոգիական, փոխադրիչ) մեքենաների տեսակները, դրանց նշանակությունը, բ. ճիշտ է սահմանում է մոդել, մոդելավորում հասկացությունները, գ. ճիշտ է ներկայացնում պարզ մակետների և մոդելների կառուցվածքն ու դրանց միացման տեսակները (շարժական, անշարժ), դ. ըստ մոդելի, տեխնիկական սկզբի, հրահանգչական քարտի ճիշտ հավաքում է գործող խաղալիքների մոդելներ և բացատրում է աշխատանքի սկզբունքը, ե. ճիշտ է տարբերում մեկուսիչները և հաղորդիչները, զ. ճիշտ է պահպանում էլեկտրական հոսանքից օգտվելու անվտանգության կանոնները:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ սպասքի նշանակությունն ու կիրառումը, կերակրատեսակների պատրաստումը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սպասքի նշանակությունն ու կիրառումը և դրանցից օգտվելու կանոնները, բ. գիտի և ճիշտ է բացատրում պատառների, բրդուցների, ջերմային մշակում չպահանջող պարզագույն կերակուրների, ոչ բարդ ջերմային մշակում պահանջող կերակուրների (ծվածեղ, եփած կարտոֆիլ, ձու) պատրաստման եղանակները, գ. ճիշտ է օգտվում կենցաղային սարքերից՝ պահպանելով անվտանգության կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔ ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՇԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 4-09-023
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը ձեռք է բերում բնական և արհեստական նյութերով, թղթով, սովարաթղթով, գործվածքներով, թելերով, կոճակներով աշխատելու հմտություններ, որը կկիրառի մասնագիտական աշխատանքային գործունեության մեջ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար մուտքային է հանդիսանում «Տեխնոլոգիայի հիմունքներ և մեթոդաբանություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ աշխատել բնական և արհեստական նյութերով
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բնական և արհեստական նյութերի տարբերությունը, բ. ճիշտ է ներկայացնում նյութերի հավաքումը, մշակումն ու պահպանումը, գ. ճիշտ է սահմանում «նախապատրաստվածք», «դետալ», «ծև», «չափ», «շինվածք» տերմինները,

	դ. ճիշտ է ներկայացնում դետալների միացման եղանակները (սոսնձով, պլաստիլինով, մետաղալարով), ե. ճիշտ է բացատրում շինվածքի պատրաստման հաջորդականությունը, հավաքումը, ձևավորումը:
Ուսումնառության արդյունք 2	Կարողանալ աշխատել թղթով և ստվարաթղթով
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում թղթի և ստվարաթղթի ծալումը, կտրումը, բ. ճիշտ է ներկայացնում դետալները իրար միացնելու եղանակները, օգտագործում է թղթի և ստվարաթղթի թափոնները, գ. ճիշտ է մատուցում խճանկարի և ապլիկացիայի պատրաստման հաջորդականությունը:
Ուսումնառության արդյունք 3	Կատարել պարզագույն գործողություններ գործվածքներով և թելերով
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում գործվածքի ձևումը, կարողանում է կատարել տարրերի միացման արդյունավետ եղանակի ընտրություն, անհրժեշտության դեպքում ներդնում է իր ստեղծագործական միտքը, բ. ճիշտ է սահմանում հենքաթել, միջնաթել հասկացությունները, գ. ճիշտ է նեկայացնում, ուսուցանում և կատարում ձեռքի պարզագույն կարատեսակները, և կարողանում է կատարել գործվածքի վրա թելի ամրացման նպատակահարմար եղանակի ընտրություն՝ կախված կարվածքի նշանակությունից, դ. ճիշտ մեթոդներ է կիրառում անհրաժեշտ թելի երկարությունը որոշելու համար, ե. ճիշտ է բացատրում 2, 4 և գաղտնի անցքով կոճակների, մեթակների ամրացման ձևերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՐԱՐՎԵՍՏ ԵՎ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՂՏԴ 04-09-024
Մոդուլի նպատակը	Մոդուլը նշակվել է ուսանողների գեղարվեստական մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացման, գեղեգիտական բարձր ճաշակ ձևավորելու, կերպարվեստի տեսակներին և ժանրերին ծանոթացնելու, նկարելու և ծեփելու հմտություններ ձևավորելու նպատակներով:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հոգեբանություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ կերպարվեստի ժանրերը, տեսակները ու առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. Կերպարվեստի դրսևորման ձևերը՝ ժանրերը, տեսակները, բ. երբ են դրանք հանդես եկել, գ. ինչ առանձնահատկություններ ունեն, դ. ժամանակը, հասարակությունը, հասարակարգն ինչ ազդեցություն են թողնում կերպարվեստի վրա:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության հիմնական դրվագները
Կատարման չափանիշներ	ա. Ուսանողը ճիշտ է ներկայացնում հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության հիմնական շրջանները և յուրաքանչյուր շրջանին բնորոշող հատկանիշները, տեսակները և ժանրերը, յուրաքանչյուր շրջանի առավելագույն ճանաչված արվեստագետներին, յուրաքանչյուր արվեստագետի առավելագույն ճանաչված աշխատանքները, հայ կերպարվեստի պատմության կարևոր դրվագները, կերպարվեստի դրսևորման ձևերը, դրա հանրահայտ ներկայացուցիչներին և նրանց հայտնի գործերը:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել նկարելու և ծեփելու որոշ հմտությունների, տեխնիկայի և տեխնոլոգիայի
Կատարման չափանիշներ	ա. Գիտի և կիրառում է նկարելու ընթացքում գունատեսության հիմունքները, բ. գիտի և կիրառում է նկարելու ընթացքում հեռանկարի հիմունքները, գ. գիտի և կիրառում է նկարելու ընթացքում լույս ու ստվերի հիմունքները, դ. գիտի և կիրառում է նկարելու ընթացքում ծավալի հիմունքները, ե. գիտի և կիրառում է նկարելու ընթացքում կոմպոզիցիայի հիմունքները,

	գ. գիտի և կիրառում է նկարելու ընթացքում համաչափության հիմունքները, է. նկարում է տարբեր նյութերով, ը. ծեփում է տարբեր նյութերով, թ. նկարում և ծեփում է բնականից, ժ. նկարում և ծեփում է դեկորատիվ ոճով, ի. նկարում և ծեփում է թեմատիկ աշխատանքներ:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԵՓ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-025
Մոդուլի նպատակը	Մոդուլը մշակվել է նկարչություն և ծեփ դասավանդելու մեթոդիկայի վերաբերյալ ուսանողի մոտ տեսական գիտելիքներ ձևավորելու, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ ձևավորելու և զարգացնելու նպատակով:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Կերպարվեստ և ուսուցման մեթոդիկա» մոդուլը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ երեխայի գեղարվեստական գործունեությունը կիրառել ուսուցողական տարբեր խնդիրներ լուծելու նպատակներով
Կատարման չափանիշներ	ա. Գիտի նախադպրոցական տարիքի երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, բ. տիրապետում է հնարքների և մեթոդների, որոնք կերպարվեստի միջոցով զարգացնում են երեխայի ստեղծագործական երևակայությունը, գ. գիտի մեթոդներ և հնարքներ, որոնք երեխաների գործունեության ընթացքում նպաստում են միջառարկայան կապերի իրականացմանը, դ. կարողանում է կերպարվեստը նպատակային օգտագործել երեխայի գործունեության կազմակերպման ընթացքում՝ տառաճանաչություն, թվաբանական հասկացությունների ձևավորում, էկոլոգիական դաստիարակություն, բանավոր խոսքի զարգացում, ծեսերի և միջոցառումների իրականացում և այլն, ե. գիտի հնարքներ և մեթոդներ, որոնք նպաստում են երեխայի տարածական կողմնորոշմանը:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ երեխայի գեղարվեստական գործունեության խնդիրները
Կատարման չափանիշներ	ա. Ջարգացնել երեխաների մոտ գեղարվեստաստեղծագործական ունակությունները, բ. զարգացնել երեխաների տեսողական հիշողությունը, տարածական պատկերացումները և ստեղծագործական երևակայությունը, գ. զարգացնել երեխաների մոտ իրականության երևույթների ու առարկաների նկատմամբ վերաբերմունք, դ. երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնել:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ երեխայի գեղարվեստական գործունեության կազմակերպման մեթոդներ և հնարքներ
Կատարման չափանիշներ	ա. Ձևավորում է պատկերավոր մտածողությունը և տարբեր մեթոդներով զարգացնում է ստեղծագործական ունակությունները:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԳ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ՍԵԹՈՂԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-026
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ներդաշնակ հոգևոր զարգացում, երաժշտական ունակությունների, երաժշտական լսողության, երաժշտական մտածողության զարգացում, ազգային երաժշտական մշակույթի յուրացում, երաժշտության ունկնդրման, երաժշտական ստեղծագործությունների ընկալման, վերլուծության և գնահատման

	ունակությունների ձևավորում:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային մակարդակ չի պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշները, որոնք ստեղծված են երեխաների համար կամ հասկանալի, հասանելի են նրանց
Կատարման չափանիշներ	ա. գիտի երեխաների համար ստեղծված ազգային և կոմպոզիտորական բարձրարվեստ երաժշտական ստեղծագործությունները, որոնք մատչելի կամ նախատեսված են 2-10 տարեկանների համար, բ. հայ ժողովրդական բանահյուսության որոշ նմուշների միջոցով (խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր) տարբեր մեթոդներ կիրառելով, զարգացնում է երեխաների ռիթմի զարգացողությունը, երաժշտական ընկալունակությունը:
Ուսումնառության արդյունք 2	Գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները:
Կատարման չափանիշներ	ա. Գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները և դրանց հեղինակներին, բ. գիտի դասական երաժշտության ունկնդրման կազմակերպման հնարքներ, գ. կարողանում է դասական երաժշտության ունկնդրում կազմակերպել՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ
Կատարման չափանիշներ	ա. Գիտի տարբեր թեմատիկ երգերի ուսուցման և կատարման առանձնահատկությունները, բ. երգ-երաժշտությունը համատեղում է երեխաների գործունեության բոլոր ձևերի հետ, գ. ճիշտ է կազմակերպում երգի ուսուցումը՝ նպաստելով երեխաների ստեղծագործական, երևակայության, երաժշտական մտածողության զարգացմանը, դ. կարողանում է պարերգի ուսուցումը վերածել ներկայացման, ե. կարողանում է երաժշտությունը գույներով արտահայտել, զ. կարողանում է մեկնաբանել լսած երաժշտությունը, ներկայացնել իր զգացողությունները:
Ուսումնառության արդյունք 4	Կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր, վարժանքներ
Կատարման չափանիշներ	ա. Գիտի երաժշտական խաղերի առանձնահատկությունները և խնդիրները, բ. կարողանում է երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր կազմակերպել, գ. կարողանում է երաժշտական տարբեր վարժությունների միջոցով զարգացնել երեխաների ռիթմի զգացողությունը, դ. երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով կարողանում է ռիթմիկ ծայներ ստանալ:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով նպաստի սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը
Կատարման չափանիշներ	ա. Կարողանում է երեխաների խոսքն ու գործունեությունը այնպես կազմակերպել, որ խոսքը դառնա ավելի երաժշտական, վերածվի ասերգի, որոշ կտորներ երեխաները նաև երգեն, բ. գիտի մայրենի լեզվի ճիշտ խոսելաձևն ու արտասանական առանձնահատկությունները, գ. երեխաների երաժշտական և խոսքային գործունեությունը կազմակերպելիս կարողանում է ճիշտ կիրառել արտասանական առանձնահատկությունը, դ. ճիշտ է կազմակերպում երգ երաժշտության ունկնդրումը, նպաստելով երեխայի լսելու տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄ «ՊԱՐ ԵՎ ՌԻԾՄԻՎԱ»

Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-027
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է սովորողին ծանոթացնել մանկական կրթական հաստատություններում պարի ուսուցման նպատակներին և առնձնահատկություններին, սովորեցնել ազգային պարեր, զարգացնել նրանց երաժշտական լսողությունը, ռիթմի զգացողությունը, զեղարվեստական մտածողությունը, մարմնին տիրապետելու մշակույթ ձևավորել:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ պետք է ուսումնասիրի «Երգ-երաժշտություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ռեսուլտառության արդյունք 1	Իմանալ պարային հիմնական դիրքերն ու շարժումները, հայ ավանդական պարարվեստի նմուշներ
Կատարման չափանիշներ	ա. Գիտի պարային հիմնական դիրքերն ու շարժումները, բ. տիրապետում է ազգային պարին բնորոշ շարժումներին, պարային դիրքերին, գ. կարողանում է երգին կամ երաժշտությանը համապատասխան պար բեմադրել, դ. գիտի մի շարք ազգային պարեր, մանկական խաղ-պարեր , ե. ճիշտ է կարողանում տարբեր պարեր և պարային շարժումներ օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս (մարմնամարզություն, ծիսական բեմականացում, երաժշտական և շարժում խաղերի կազմակերպում, թատրոն, մնջախաղ), զ. կարողանում է ճիշտ պահպանել պարային կեցվածքը, մարմնի տարբեր մասերի շարժումների զուգորդումը, է. ծանոթ է ազգային ծեսերին և դրանց հատուկ պարերին, բեմականացվող խաղերին:
Ռեսուլտառության արդյունք 2	Կարողանա խմբի հետ պարել հայ ավանդական պարարվեստի նմուշներ
Կատարման չափանիշներ	ա. Գիտի ազգային ավանդական պարերի հիմնական դիրքերն ու շարժումները, բ. կարողանում է ազգային պարին հատուկ շարժումներով պարեր, պար-ներկայացումներ բեմադրել, գ. կարողանում է խմբի հետ պարել առավել տարածված պարերը:
Ռեսուլտառության արդյունք 3	Տիրապետել պարի ուսուցման տարբեր մեթոդների և հնարքների
Կատարման չափանիշներ	ա. Գիտի պարերի ուսուցման մեթոդներ և հնարքներ, բ. մանկական շարժում խաղերում, պարերում ճիշտ է կիրառում ազգային պարի տարրերը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, գ. կարողանում է բեմականացնել երգեր, պարեր, երաժշտական հեքիաթներ և պարով կերպարներ ստեղծել՝ օգտագործելով պարը որպես արտահայտչաձև, դ. կարողանում պարը կիրառել որպես մտածողության արտահայտման միջոցներից մեկը՝ պարային շարժումներով միտք արտահայտել - փոխանցելով, ե. գիտի ազգային մանկական շարժում խաղեր և կարողանում է դրանք օգտագործել միջոցառումների ժամանակ, զ. կարողանում է ներկայացնել կամ բեմադրել կենցաղային աշխատանքային տեսարաններ (խաղող ճգնելը, ճլորթի խաղալը, խնոցի հարելը, սերմ ցանելը...) և դրանք ներառել մանկական պարերի մեջ:
Ռեսուլտառության արդյունք 4	Կարողանա պարի միջոցով զարգացնել երեխաների ստեղծագործական երևակայությունը
Կատարման չափանիշներ	ա. Կարողանում է պարել ցանկացած երաժշտության տակ, բ. կարողանում է մի պարում տարբեր ոճեր միացնել, գ. կարողանում է պարը որպես լեզու օգտագործել՝ պարով կերպար ստեղծել, մտածողություն արտահայտել, սյուժե բեմականացնել՝ համատեղելով պարն ու մնջախաղը,

	դ. պարուսուցումն իրականացնում է նաև որպես մարմնին տիրապետելու արվեստ:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ մանկական տարբեր ոճերի պարեր բեմադրել՝ կիրառելով պարը որպես մտածողության, հուզականային որակների արտահայտման միջոց
Կատարման չափանիշներ	ա. գիտի տարբեր ոճերի պարերի առանձնահատկությունները, բ. կարողանում է ռիթմիկ և մարզական պարեր բեմադրել, գ. կարողանում է համադրել տարբեր ոճերի պարային շարժումներ:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՖԻԶԻԿԱԿԱՆ ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԴՏԴ 04-09-028
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է կրտսեր դպրոցի ապագա ուսուցիչներին օգնել տիրապետելու կրտսեր դպրոցականների ֆիզիկական զարգացման և նրանց ֆիզիկական գործունեության կազմակերպման մեթոդներին ու միջոցներին, որոնք անհրաժեշտ է կիրառել աշխատանքային գործունեության ընթացքում:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի համար անհրաժեշտ է յուրացնել «Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ», «Մանկավարժություն», «Հոգեբանություն» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ընդհանուր հարցերը /հիմնական հասկացությունները, խնդիրները, միջոցները և աշխատանքային ձևերը տարրական դասարաններում/
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները և դրանց փոխկապակցվածությունը, բ. ճիշտ է ներկայացնում ֆիզիկական դաստիարակության միջոցների տեսակները և երեխայի օրգանիզմի վրա նրանց ազդեցության ուղիները, գ. ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները, դ. ճիշտ է բնութագրում ֆիզիկական դաստիարակության կապը մտավոր, աշխատանքային, գեղագիտական, բարոյական դաստիարակության հետ և հիմնավորում նրանց նպատակների, խնդիրների ընդհանրությունն ու նշանակությունը:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ և հիմնավորելով կիրառել ուսուցման և ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր մեթոդները՝ դպրոցականի ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելիս
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ֆիզիկական կուլտուրայի դասին առաջադրվող պահանջները և խնդիրները, բ. ճիշտ է բնութագրում և ցուցադրում դասի կառուցվածքային բաժանումը, դասի մասերի տևողությունը, խնդիրները, բովանդակությունը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը և դասի խտությունը, գ. ճիշտ է բնութագրում և ցուցադրում ֆիզկուլտուրայի դասերի տեսակները ըստ բովանդակության բնույթի և ըստ մանկավարժական առաջատար խնդիրների, դ. ճիշտ է ներկայացնում և հիմնավորում ֆիզկուլտուրայի դասի նախապատրաստական աշխատանքների հաջորդականությունը և ուսումնական նյութի պլանավորումը ըստ դասի կառուցվածքային մասերի, ե. ճիշտ է ներկայացնում դասի ընթացքում աշակերտների ֆիզիկական ծանրաբեռնվածության և դասի խտության չափավորումը, մշակում է հավանական վնասվածքների կանխարգելման միջոցառումներ, զ. ճիշտ է բնութագրում և ցուցադրում աշակերտների գործունեության կազմակերպման ֆորմալ, հարահոս, հերթափոխային, խմբակային, շրջանաձև մեթոդների առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները, է. ճիշտ է բնութագրում և ցուցադրում ուսուցման խոսքային և գործնական մեթոդների կիրառումը ուսումնական աշխատանքների ժամանակ,

	<p>ը. ըստ առաջադրանքի ճիշտ է կատարում վարժությունների անմիջական ցուցադրման եղանակները. ա) իրական, բ) շեշտադրված, գ) հայելաձև, դ) առաջատար, ե) հակադրական:</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Բնութագրել և ցուցադրել մարմնամարզական վարժությունների տեսակները /շարունակ-շարափոխումներ, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ, հիմնական շարժումներ, պարային շարժումներ, խաղեր, սպորտային վարժություններ/</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. Ըստ առաջադրանքի կազմում է մարմնամարզական վարժությունների դասակարգման գրաֆիկ, բ. ներկայացնում և ցուցադրում է շարունակների, շարափոխումների, դարձումների տեսակները և դրանց ուսուցման մեթոդիկական տարրական դասարաններում, գ. ներկայացնում և ցուցադրում է ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների տեսակները տարրական դասարաններում, դ. բնութագրում և ցուցադրում է ելման դրությունների տեսակները, ե. բնութագրում և ցուցադրում է հիմնական շարժումների տեսակները և ուսուցման մեթոդները տարրական դասարաններում, զ. բնութագրում է շարժախաղերի և մարզախաղերի նշանակությունը դպրոցականների շարժողական որակների ձևավորման գործում և ներկայացնում է դրանց կազմակերպման մեթոդները, է. ներկայացնում և գործնականորեն կատարում է շարժախաղերի և մարզախաղերի կազմակերպման առաջադրվող կանոնները, կազմակերպման փուլերը և խաղի բեռնվածության չափավորումը, ը. ինքնուրույն կազմում է խաղաքարտ տարբեր բնույթի շարժախաղերի համար:</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Բնութագրել և գործնականորեն ցուցադրել դպրոցականի օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները դպրոցում</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները և դպրոցականի անձնական հիգիենային ներկայացվող պահանջները, բ. ճիշտ է բնութագրում կոփման ֆիզիոլոգիական ելությունը, նշանակությունը, կոփման միջոցները և նրանց ներկայացվող հիգիենիկ կանոնները, գ. ճիշտ է բնութագրում ճիշտ կեցվածքի և կեցվածքի շեղումների արտաքին նշանները, դ. ըստ առաջադրանքի ճիշտ է կազմում կեցվածքի ձևավորմանը նպաստող ֆիզիկական վարժությունների համալիր, ե. ճիշտ է ներկայացնում դպրոցականի կեցվածքի շեղման պատճառները:</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Բնութագրել և ցուցադրել ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումները և արտադասարանական աշխատանքները դպրոցում</p>
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բնութագրում և ցուցադրում առավոտյան նախավարժանքի, ֆիզկուլտ-դադարի նշանակությունը և կառուցվածքը, բ. ճիշտ է բնութագրում և ցուցադրում արտադասարանական աշխատանքների ձևերը և դրանց առաջադրվող խնդիրները տարրական դասարաններում, գ. ըստ առաջադրանքի ճիշտ է կատարում մարզական տոնի և ժամանցների նախապատրաստական աշխատանքներ, կազմում է սցենարներ, դ. ըստ առաջադրանքի ճիշտ է կազմում տուրիստական արշավի ծրագիր՝ կատարելով երթուղու քարտեզագրում, ե. ըստ առաջադրանքի ճիշտ է կազմում դպրոցականների յուրացրած շարժողական հատկությունների, հմտությունների և ունակությունների գնահատման սանդղակ:</p>

Միջին մասնագիտական կրթության 0312 «Դասավանդում տարրական դասարաններում»
մասնագիտության օրինակելի ուսումնական պլան

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ				
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2	Տնտեսագիտության հիմունքներ		72	48	3
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		72	48	2
4	Իրավունքի հիմունքներ		54	36	3
5	Պատմություն		72	48	3
6	Ռուսաց լեզու		99	66	1
7	Օտար լեզու		99	66	2
8	Ֆիզիկական կուլտուրա		172	172	1, 2, 3
	ԸՆԴԱՄԵՆԸ		748	556	
	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		27	18	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		81	54	1
2	Հաղորդակցություն		54	36	1
3	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
4	Համակարգչային օպերատորության հիմունքներ		81	54	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		270	180	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն		108	72	1
2	Շարահյուսություն և ոճաբանություն		108	72	1
3	Խոսքի զարգացում		108	72	2
4	Մաթեմատիկա		216	144	1
5	Գրականություն		108	72	1
6	Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա և առողջապահության հիմունքներ		162	108	1
7	Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ		54	36	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		864	576	
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Հոգեբանություն		162	108	1
2	Մանկավարժություն		54	36	1
3	Մանկական գրականություն և ժողովրդական բանահյուսություն		216	144	1
4	Դաս թատրոն		108	72	3
5	Կրտսեր դպրոցի մանկավարժություն		216	144	2
6	Հատուկ մանկավարժություն		54	36	2
7	Դպրոցավարություն		54	36	3
8	Տրամաբանություն		216	144	3
9	Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ		54	36	2
10	Բնագիտություն		81	54	2
11	Հայոց լեզվի ուսուցման ավանդական և նորոգույն մեթոդների համակցումը		108	72	2
12	Հայոց լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդաբանությունը		108	72	3
13	Թվաբանական, մաթեմատիկական, հանրահաշվական և երկրաչափական		216	144	2

	տարրերի ուսուցման մեթոդիկա				
14	Մաթեմատիկայի դասավանդման ժամանակակից մեթոդաբանություն		54	36	3
15	Տեխնոլոգիայի հիմունքներ և մեթոդաբանություն		108	72	2
16	Աշխատանք բնական և արհեստական նյութերով		108	72	3
17	Կերպարվեստ և ուսուցման մեթոդիկա		108	72	1
18	Նկարչություն և ծեփ		108	72	2
19	Երգ երաժշտություն և դասավանդման մեթոդիկա		108	72	2
20	Պար և ռիթմիկա		108	72	3
21	Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա		135	90	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		2484	1656	
	ԸՆՏՐՈՎԻ		135	72	
	ՊԱՅՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		102	38	
	ԸՆԴԱՄԵՆԸ	86	4642	3096	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		300	300	
	ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				
	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ	26			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	11			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	3			
	ԸՆԴԱՄԵՆԸ	126			